

8. ՀԱԶԱՐԱՆ ԲԻԼԲՈՒԼ

Թագավորմ կէղի, թագավորին իրեք տղա կէղի։ Էգ թագավոր մեկ բաղ կշիքա, պակաս բան չի թորկա։

Ժողովք կէնեն ինք ուր ողիրներ, թե ի՞նչ պակասութուն կէղի էդոր մեջը լըմեցունք։

Ողիրներից հ՚առաջինը կասա թե.— Թագավոր, էտոր բան օր պակաս կա՝ մեկ հատ Հազարի բիլբուլ է։

Ժողովքի մեջը կխոսան, թե որ մեկը պետք է երթա Հազարի բիլբուլը բերե։

Կըսին թե.— Թագավորի տղեն պետք ա բերի։

Ժողովք էդ վճիռ կտեսին։

Թագավոր տղեկներուն ըսավ.— Պետք ա դուք երթաք Հազարի բիլբուլը բերեք։

Երկու ճեռչ ախպերը ելան պատրաստութուն տեսան ուրանց ծիաներին, պզտիկ ախպեր տեսավ օր ուր ախպրտիք մշակ կպըռնին ուրանց ծառայութեն անի, ըսաց.

— Ուրիշ մարթ ուրանց խորոտ չի մուղաթ կենա, ես կէրթամ ուրանց խորոտ մուղաթ կկենամ։

Էլին իրեք ախպեր խըտ իրար կէրթան։ Շատ կէրթան, քիչ կէրթան, շատ ու քիչ աստված գինա, մե սարի մե գլոխ մե խովըվու մե ռաստ դիգան։

Խովըվուց կխարցուն թե.— Էս տեխ վաղո՞ւց խովըվութուն կէնիս։

Կըսա.— Էս տասնխինդ տարի կէղի օր ես էս դին խովըվութուն կէնիմ։

Խովրվուց կխարցուն.— Հազարի բիլբուլ չգի՞նաս որ դին ա։

Կրսա.— Ես Հազարի բիլբուլի անուն չեմ լսերի, հան ձրդե լըսեցի.— Կրսա.— Էստեխ իրեք ճամբախ կա, էս մեկ ճեռչ ճամփու էրթըցող էկե, տեսեր իմ, էնա մեկելին էրթըցող մեկ մեկ տեսեը իմ, էկե, հմա էսա պզտիկ ճամփով էրթրցող ըսկի չեմ տեսե էկե։

Էն տեխ իրեք ախպեր իրարու էրես պաքնելով, ճեռչ ախպեր ճեռչ ճամփով գնաց, միջնեկ ախպեր միջի ճամփով գնաց, իսկ պզտիկ՝ պզտիկ ճամփով դնաց։

Պզտիկ ախպեր էրկու օր օր էդ խովրվուց հեռցավ, ուր էրթած ճամփի խոզը փոխվավ, սիվտակ խոզ էկավ, ջուր սիվտակ, փետ սիվտակ, քար սիվտակ։ Իրեք օր էդ սիվտակ խոզի մեջ գնաց, մեկ սիվտակ քոշկմ ռաստ էկավ։ Քոշկի հ՝առեճը մե ախպուրրմ կար։ Էդ ախպուրի վրեն նստավ, մե փըշում հաց կերավ, պտի էլեր էրթեր ախպուրի վրեվեն, ինքն տեսավ օր խորոտ ախչիկմ քոշկի միջից ծեն տվեց, թե.

— Ա՜յ մարթ, դու ի՞մալ ես ըստեխ էկեր, դու Սիվտակ դևի անուն չե՞ս լսե, հավքն ուր թևով, օձն ուր պորտով Սիվտակ դևի խոզ չէկեր էր։

Էդ տղեն դառցավ ախչկան ըսավ.— Էստեխ քալող չե՞ս գիտի օր դևից չվախնա, աստված էնոր կաղատե դևից։

Էդ խոսքն օր ըսավ, ախչիկն դուռ բացեց, խանչեց էդ քոշկի մեջ տղին նստրցուց։ Բերեց լավ հաց, լավ զատ կերցուց։

Հ՝իրիկուն տեխ դևն օր կուգար, ախչիկն էդոր ճամփեց ծիանոց։

Դևն օր էկավ տուն մտավ, ախչկնից խարցուց թե.

— Խոզածնի խոտ դուգա մեր տնից։

Ըսավ.— Ա՜յ մարթ, սարեն դու կուգաս, ծորե՞ն դու կուգաս, մարթ մարթախոտ քրգնե կուգա։

Շատ օր զոռեց ախչկա վրա, ախչիկ ըսավ.— Ա՜յ մարթ, քեզնից պախեմ, աստծուց ի՞նչ պախեմ, մե խեղճ ժողովքրրանմ էկավ, վեր չթորկեցի էլավ, ծիանոցն է։ Քու ծենը էր լսեց՝ հ՝ինքը մկա մեռավ։

Դևն ըսավ.— Թե չմեռի, գնա կանչա վեր թրխ գա։

Ախչիկն իջավ ծիանոցեն կանչեց, տարավ դևի մոտ։ Դև տեխ նշանց տվեց՝ թե նստի։ Մարթն դևն օր տեսավ, շատ վախեցավ, նստավ դևի նշան տված տեխ։

Հաց բերեցին, կղանչեցին հացի վրա, մարթն վախեցավ հաց չկերցավ ուտե։ Էնպես վախեցած անոթի մնաց։ Էլավ ծիանոց գր–

նաց, պառկավ. «Է՜յ, աստված, ասավ, ինչպե՞ս կէղի, ես դևի ծեռքից ինչպե՞ս կաղատես ընծի»։ Էդպես ասելով ծիու մսուրը պառկեց։

Գիշերը մե մարթ իրեն էրազի մեջ էկավ թե. «Ա՜յ մարթ, ինչո՞ւ էդքան հուսահատ էղեր ես, քու հուս աստծուց մի՛ կտրեր։ Սարախտան շուտ քնուց գելիս, ախպրի վրա կլվացվիս,քու աստված կղանչես, կիգաս էնոր ծիաներից մեկ ծինմ կքաշես կթամքես, քու աստված կղանչես կխեծիս։ Շուտ, շուտ կքշիս, մեյդան մը կէրթաս, էնոր փանջարի դեմը կայիմ կամչի մը կզարկես ծիուն, կբոռաս Սիվտակ դևին թե. «Ե՜լ, խըտ քըղի էկեր եմ կռիվ կէնիմ»։ Էն վախտ դև քնուց վեր գելի, քրզի հետ կռիվ կէնա, դու էնոր կաղթես»։

Էրազից իմցավ օր լուսացեր էր։ Գնաց ախպուր, լվացվավ, էկավ էդ մարթու ասելով ծին քաշեց, թամքեց ու աստված կղանչեց, ծին հեծավ։ Մեյդան մի գնաց էկավ փանջարի հ՝առեճ մի կայիմ ղամչի մի ծիուն զարկեց, բոռաց։

— Գարշելի գազան, ել, էկեր եմ քըզի հետ կռիվ կէնիմ. էսօր յան աստված քըզի կիտա, յան ինձի կիտա։

Տղեն օր բոռաց, դև վախելով ախչկան պատմեց թե.

— Ինձ աղթա էս մարթն է, ինձ չաղթա էս մարթն է։

Դևն էլավ, առանցի լվացվել խըտ մարթուն կռիվ էնեց։ Մինչև ակըրտին (նախաճաշին) տղեն դևին սպանեց։

Տղեն օր դևին սպանեց, ախչիկն ծիծղալով վազավ տղին ուր մոտ տարավ։ Էրկ օր տղին պախեց։

Էն մեկ օր ասաց.— Ա՜յ տղա, քու ի՞նչն է, ընծի ասա։

Կըսե.— Ես կէրթամ Հազարի բիլբուլի։

Կըսե,— Հազարի բիլբուլը քըգնե նոր լսեցի։

Կըսե.— Ես կէրթամ։

Կըսե.— Ի՞մալ կէրթաս, էս Ճերմակ դևն էր։ Կարմիր դևն ի՞մալ պտի ընցնիս։ Էրկու օր սիվտակ խոզ կանցնիս կրնդիս Կարմիր դևի խոզը։

Տղեն ուր աստված կանչեց, իրեք ավուր հաց առավ ուր խետը էլավ Ճամբախ ընգավ։

Էրկօր օր գնաց, սիվտակ խոզն ընցավ, ընգավ Կարմիր դևի խոզ։ Խոզ կարմիր, փետ կարմիր, ջուր կարմիր, քար կարմիր։ Մի օրմ էլ կարմիր խոզի մեջ գնաց, կարմիր քոշկիմ ռաստ էկավ։

Հ՝աղպուրմ կար դռան հ՝առեճ, հ՝ախպրի վրեն նստավ, մեկ քիչ ուրհաթավ, տեսավ օր քոշկի միջից մե ախչիկմ փանջարից գըլոխ դուրս խանեց, կղանչեց.

— Ա՛յ մարթ, դու ի՞նչ մարթ ես, էստեխ էկեր էս, հավքն ուր թևով, օձն ուր պորտով Սիվտակ դևի խող չանցեր էր, Կարմիր դևի խող չէկեր էր։ Դու ի՞մալ ես էկի։

Տղեն ըսաց.— Սիվտակ դևից աղատող աստված, Կարմիր դևից էլ կաղատա։

Տղեն էդ խոսքն օր ասավ, ախչիկ ուրախելեն, ծիծաղելեն վաղավ դուռ բաց էնեց։ Հաց բերեց տղին կերցուց։

Տղեն ըսաց.— Կարմիր դևի հնարքն ի՞նչ ա, ինչո՞վ կսպանվի։

Ըսաց.— Ուրին թուրմ կա, ուր թուր չըլի, ուրիշ թուր էնոր շանի մեշ չի բանի։

Ըսաց.— Ուր թուր ո՞ր տեխն ա, ընձի ըսա ուր թուրի տեխ։

Ախչիկ թրի տեխ տղին նշանց տվեց։ Տղեն թուրը ուր ծեռք առավ, մեկել ծեռը կալան (թրի աման) թալեց, քաշեց, թուրը կալանից խանեց դուս։ Ախչկնից խարցրեց.

— Դև ո՞ր ճամփով կուգա։

Ախչիկ ճամբախ նշանց տվեց։ Տղեն էլավ, ախչկա նշանց տըված ճամփով գնաց։ Գնաց դևին ռաստ էկավ։ Զարկեց Կարմիր դևն սպանեց, դարձավ տուն էկավ։

Ախչկան ըսաց թե.— Դևն սպանեցի։

Մե էրկօր ախչկա մոտ մնաց, ախչկաց խարցուց։

— Հազարի բիլբուլի տեխ չե՞ս գիտե։

Ըսաց.— Մեզնից էն տեխ Սև դև մը կա, իմ պզտիկ քուր էն Սև դևի մոտն ա, թե էնի գինա Հազարի բիլբուլի տեխ։

Տղին էդ խոսքն օր ըսավ, տղեն ուրին իրեք ավուր խաց առավ, էլավ ճամփա ընգավ։

Մի էրկօր գնաց, Կարմիր դևի խողն հ'ընցավ ընդավ Սև դևի խող։ Խող սև, քարը սև, փետը սև, ջուրը սև, գնաց սև քոշկի մը ռաստ էկավ։ Քոշկի դռան հ'առեճ հ'ախպուրմ կար։ Հ'ախպրի վըրեն նստավ, մե քիչ ոըհաթավ, տեսավ օր ախչիկմ փանջարից գըլոր դուս խանեց, կղանչեց թե.

— Ա՛յ մարթ, դու ի՞նչ մարթ ես օր էստեխ էկեր էս։ Խավք ուր թևով, օձն ուր պորտով Սիվտակ դևի խող չանցեր էր, Կարմիր դևի խող չէկեր էր։ Սև դև իմացեր օր ուր էրկու ախպեր սպանած։

Տղեն ըսաց.— Ի՞նչ կզարմանաս, Սիվտակ դևից, Կարմիր դևից աղատող աստված, Սև դևից էլ կաղատա։

Ախչիկ էդ խոսք լսելով, ծիծաղելեն վազավ, դուռ բացեց, տըղին վեր տարավ։ Հաց բերեց տղին կերցուց։

Տղեն խարցուց թե,— Ախչի՛, էդ դև ինչո՞վ կաղթվի։

Ըսաց.— Ընչի՞ չըս գիտե, թե ինչով կաղթվի, էրկու դև ինչով աղթեցիր էնոր լէ էն տեսակով կաղթես։

—Էնոնց՝ էնոնց թրով աղթեցի։

— Էնոնց օր ուրանց թրով աղթեցիր, էսոր լէ ուրան թրով կաղ-թես։

Տղեն խարցուց թե.— Էնոր թուր դո՞ր է։

Ախչիկն ըսաց.— Էնոր թուրը պատեն կախ ա։

Տղեն էլավ, ծեռ թալեց թուր իջուց, խարցրեց ախչկնից թե.

— Դև ո՞ր ճամփով գիզա։

Ախչիկ ճամբախ տղին շանց տվեց։

Տղեն էլավ էն ճամփով գնաց։ Սև դևին ռաստ էկավ, դևին ըսաց.

—Գարշելի գազան, էկեր իմ քըզի հետ կռիվ կէնիմ։

Ըսաց.— Խողածին, քու նշանց կիտամ կռիվ էնելը։

Ըսաց.— Էկեր իմ քըզի կռիվ կէնիմ, տեսնամ դու ի՞մալ իմ նշանց կիտաս։

Հասան իրար հետ կռիվ էնեցին։ Էրկու սահաթ կռվան, տղեն դևին սպանեց։ Տուն էկավ։ Ախչիկ խարցուց թե.

— Իմա՞լ դու սախ փրցար, էկար դևի ձեռքից։

Ըսաց.— Դևին սպանեցի։

Ախչիկ շատ ուրախացավ, ծիծաղեց, ըսաց.— Ըստեղրանք դու ի՞նչ բան ունիս։

Ըսաց.— Էկեր իմ Հազարի բիլբուլ տանելու։

— Քու ճամփողի վիզը կոտրի, Հազարի բիլբուլ ո՞վ ա տարե օր դու տանիս։

— Ընչի՞, ի՞նչ կա, ես էկեր եմ օր տանիմ։

Ախչիկ խարցուց թե.— Դու գիտե՞ս Հազարի բիլբուլ որ տեխն է օր տանիս։

— Ես էկեր եմ օր խարցնելով տանիմ։

— Հազարի բիլբուլ օր ասեմ տանիս, մեզ էլ քեզ խետ կտա-նի՞ս։

— Եթե օր բերեմ, կտանիմ, քուրերդ ախպրտոցս խամար կը-տանիմ, քեզ լէ ինձ խամար կտանիմ։

— Ես կըսիմ, դու կէրթաս, կրերիս։ Մենք Հազարի բիլբուլի սինորկիցն ենք։

— Ուրեմն էնոր ամեն բան դինա՞ք։

— Այո՛, գինանք։ Ուրբաթ օր էնոր ճամփու նոբատարների (հսկողների) կիրակին է, էրթրցողին բան չեն ասի։ Կէրթաս դրնցիս

ճամփու իւեա, չըս զրուցի մեկի խետ։ Մե խորոտ քոշկմ կա, էն քոշկի դռան էն կողմ։ էն կողմ մեկ օղ կա։ Հազարի բիլբուլի տեբը ինքն լէ քնած կէղի, քու ծին աջ կողմի օղ կկապիս, քառսուն օտ ներդիվան դելիս, աջ կողմ մե դուռմ կա, էն դուռ բաց կէնիս, մե խորոտ ախչիկմ քնած ա, էդոր դլխու վերև ճաղրմ զարկուկ ա, Հազարի բիլբուլ վրեն դրուկ ա։ Դուն էն ախչկա էրեսից պաքրմ կառիս, ախչկա շապիկն դլխու վերև թալած ա, շապիկ ձեռքդ կառիս, Հազարի բիլբուլ ճաղից կիջուս, կբերես։ Եթե շապիկ չվերուս, Հազարի բիլբուլ չի դա։ Կառես և ետ դիդաս։ Եդ ու Հ՚առեջ չիշկիս, ի՞նչ կխոսան՝ անկաջ չէնիս, ուրբաթ օր ընցավ էլ չկեոնաս բերես։

Ախչիկն էդ օր ըսաց, տղեն ախչկա ըսելով ուրբաթ օր Հազարի բիլբուլի խոզը մտավ։ Ախչկա թարիֆ էնելով գնաց Հազարան բիլբուլ բերեց։

Էկավ Սև դևի խոզ։ Սև դևի կնիկը ունեցած չունեցած ուր խետ վերցուց, գնաց Կարմիր դևի խոզը, Կարմիր դևի կին էլ խետ վերցուց, ունեցած չունեցածով էկավ Սիվտակ դևի խոզը, առավ Սիվտակ դևի կնիկը, ունեցած չունեցած հետ բերեց, էկավ խովրվու կուշտ, խովրվուց խարցուց թե.

— էն ճամփու էրթցողներ էկա՞ծ, թը՞ չէկած։

— էն օրվընե օր դուք բաժվեր էք իրարուց, դըհա էնոնք չէկած են։

Տղեն իրեք չադր շիքեց, ամեկ կնիկ մե չադրի մեջ դրեց, խովրվուն ըսաց.

— Ես էս մեծ ճամփով կէրթամ, էս օրթալըխի ճամփու տղեն օր էկավ, էս կարմիր չադր ուր նշանց կիտաս, էրթա չադրին մուզաթ կենա, մինչև ես իգամ։

Էդ ըսելով ընգավ ճամբախ, գնաց։ Շատ ու քիչ աստված գինա ինչքան գնաց, մե ղազարածի մը ռաստ էկավ, Ղազարածն ուր ճեոչ ախպերն էր։

Ըսաց.— Թագավորի տղա, չէ՞ դու էկեր իր Հազարի բիլբուլ կտանիր, մկա էղեր ես ղազարա՞ծ։

— է, ի՞նչ էնիմ, էկա ըստեխ խարջլիս պրծավ, էղա ղազարածի։

— Քելա՛, ղազեր տանինք տիրուն տանք։

Ղազեր կտանին տիրուն կիտան։ Կէրթան չարսուն պզտիկ ախպեր ճեոչ ախպոր խամար խորոտ շորեր կառի, ախպոր կխաքու, ախպեր կառի ուր խետը գիգա։

Սիվտակ չադրը նշանց կիտա.— Գնա՛, սիվտակ չադր նստի, էն ախչիկ քու կնիկն է։

Ախպեր կէրթա սիվտակ չադրն կնստի։

Ախպոր կասա թե.— Խորոտ մուղաթ կեցի, ես էրթամ մեկել ախպեր բերեմ։

Ըսելով գելի, ճամբախ կիտա ուր հ'ասեճ, կէրթա։ Կէրթա մեկ քաղաք ղուր ախպեր չարսուն կդտի։ Կտեսնա ուր ախպոր շորեր կտրտած, չարսուն կզվռնի։ Ախպոր կառի, դուքան կմտի, խորոտ շորեր կառի կխաքցու, վերցու ուր խետ գիգա։

Կիգա չադրների մոտ կարմիր չադր նշանց կիտա, ախպոր կըսա.

— Գնա չադր, չադրի միջի ախչիկն էլ քու կնիկն է։

Էդ գիշեր էդտեխ կմնան, լուսուն գելին, խըդ իրարու կբառնան, ճամբախ կընգնան։

Գացին չոլըմ, ջուր չկար, խորըմ էր։ Էգ խորուց ջուր պտի քաշին օր ծիանք ջրին, ուրանց լէ կերակուլ էփին։

Մեծ ախպեր ըսաց.— Ես կմտիմ։

Մեծի պզտիկ ըսաց.— Չէ՛, դու իմ մեծն ես, ես կմտիմ։

Ամենից պզտիկն ըսաց.— Չէ՛, ես կմտիմ, դուք իմ ախպըրտիքն եք։

Պզտիկ ախպոր խոր մտուցին, ջուր խանեց, ծիաներուն ջուր տվեցին, ուրանց կերակուլին ջուր խանեց։ Շրիդն կտրեցին, էլ ախպոր չհանեցին։

Էրկու ճեռչ ախպրտիք էլան էդտից բարցան գացին, ախուզեր խորի մեջ թորկեցին։ Էդոր կինն լէ առին տարան։ Պզտիկ ախպոր կնիկ[1] էրկու բուրոջ մոտից խորոտ էր, էն հ'ապով էրեցին էղ բան։

Առան գացին, Հազարի բիլբուլ հոր տվեցին։

Հազարի բիլբուլ չի ղրուցա, չի խոսա։ Թագավոր խարցուց տղեքներից թե.

— Ձեր ախպեր հ'ո՞ւր է։

— Մենք գացինք օր կռիվ էնեցինք, կնկտիք առանք Հազարի բիլբուլ բերինք, մեր ախպեր հետ մնաց, զարկեցին մեր ախպեր սպանեցին։

Էդ ըսելով ավտըցուցին ուրանց հորը։

Օրերուց օր մը բազրգան մը էկավ պզտիկ ախպոր հորի վրա թալեց։ Ուզեց օր մե մշակ իջուցեր ջուր խաներ։

Տղեն խորից ծեն տվեց.— Քուլակ (դույլ) իջուցեք, ես ջուր տամ, ընծի խանեք խորից։

---

1 Թե. կնիկ չիք (Ս. Կ.)։

— Շատ լավ,— ասաց։

Քուլակ իշուցին, ինչքան ջուր էնոնց հարկավոր էր խանեցին։ Տղին էլ խորուց դուս խանեցին։

Էն վախտ օր տղեն խորուց դուս էլավ, Հազարի բիլբուլ ղրուցեց։

Հազարի բիլբուլի տերը ասքար էնեց, էկավ էդ թագավորի քաղաք պաշարեց։

Դրեց թագավորի վրեն.— Հազարի բիլբուլի բերողը քեզնից կուզեմ։

Թագավոր կղանչեց ուր տղեքները.— Հազարի բիլբուլը ինչպես բերեր եք, գացեք էնպես պատասխան տվեք։

Մեծ տղենը էլավ գնաց, Հազարի բիլբուլի տերը խարցրեց թե.

— Ինչպե՞ս Հազարի բիլբուլը բերեցիր։

Ասաց.— Գացինք, կռվանք, բերեցինք։

Հազարի բիլբուլի տերը ճլոթըմ զարկեց էրկու ակռա կոտռավ.

Ասաց.— Գնա՛, ասա, թըխ Հազարի բիլբուլի բերողը ճամփա. թե չէ՝ քաղաք տակն ու վրա կէնիմ։

Ճեռչ տղեն ակռեք ծեռք հոր մոտ էկավ։

Հեր ասաց.— Ի՞նչ էնեցիր։

Ասաց.— Մեր տեսածով ասեցի, չհավատաց, զարկեց էրկու ակռեք լէ կոտռեց, ասաց. «Հազարի բիլբուլի բերող թրխ ճամփի, չճամփի քաղաք տակն ու վրա կէնիմ»։

Կղանչեց միջնեկ տղին։ Միջնեկ տղեն լէ գնաց, մեկել ախպոր պես էն լէ ասավ։ Էլավ մե ճլոթըմ էլ էնոր զարկեց, ասաց.

— Գնա՛, ասա, թըխ Հազարի բիլբուլի բերող ընձի ճամփե, թե չէ՝ քաղաք տակն ու վրա կէնիմ։

Էն էլ էնպես, էրկու ակռեն ծեռքն առավ, հոր մոտ գնաց։

Հեր խարցուց տղից.— Ի՞նչ էնեցիր։

Էն լէ ասաց.— Մեր տեսածն ասեցի, չհավատաց, զարկեց էրկու ակռեք կոտռեց։

Միջնեկ տղի պատմելու դախը, բազրգան էդտեխ էկեր էր թագավորի տեսության։ Հարցրեց թագավորին թե.

— Ի՞նչ բան է։

Ասեց թե.— Իմ տղեքներ գացած Հազարի բիլբուլ բերած, Հազարի բիլբուլի աերը էկած, բերողն գուղե ինձնից։ Իմ էրկու տղեն ճամփեցի, ոչ մեկ չկերցավ էնոր պատասխան տեր։

Բազրգան բաշին օր հ'իմացավ էդ բան, գնաց ուր տունը պատմեց ուր տնեցիներին, թե.

— Էս քաղաքը վտանգի մեջ է։

Հարցրեց տղեն.— Ինչո՞ւ վտանքի մեջ է, հայրիկ։

Ըսավ.— Էս քաղքի թագավորի տղեքը գացած Հազարի բիլբուլ բերած, հիմա Հազարի բիլբուլի տերը էկե Հազարի բիլբուլի բերողը[1] կսուղե։

— Բերողն չի կենա՞ պատասխանե, թե ի՞նչպես ա բերի, օր նեղութուն չիտան էդ քաղքին։

— Չէ՛, որդի, բերողներ գացած չկերցած պատասխանած, զարկե ամեկուն էրկու ակռա լէ կոտռե։

—Հայրի՛կ, գնա ըսե թագավորին, իմ տղեն կըսա. «Ինչ կիտա ընձի օր իգամ էդ մարթուն հեռըցում էդ քաղքից»։

— Որթի՛, էդպես հունարըմ ունի՞ս։

— Ունիմ էդ հունար։

Բազրգան էլավ գնաց թագավորին ըսաց.— Իմ տղեն կըսա թե. «Ինչ կիտաս ընձի, օր իգամ հեռըցում էդ մարթուն էդ քաղքից»։

Թագավորն ըսեց.— Ի՞նչ ուզե՝ կիտամ, թըխ իգա, ըդ մարթուն հեռըցու էդ քաղքից։

Բազրգան ետ դարձավ, տղին ըսեց, տղեն խետ վերուց. գացին թագավորի տուն։

— Որթի,— ըսաց,— ուզի տամ, եթե կարող ես հեռըցուցել, ի՞նչ ուզիս կիտամ։

Ըսաց.— Տեր իմ, ես կհեռըցում էս քաղքից, քու տղեքներ Հազարի բիլբուլի խետ ինչ է բերած։

Թագավոր ըսաց թե.— Հուր ու մուր շատ ա բերած։

— Էլ,— ըսաց,— ի՞նչ ա բերած։

Իրեք հատ ախչիկ են բերած։

— Էն էրկսից պզտիկ ախչիկը ինձ կիտա՞ս, օր էրթամ հեռըցում էս քաղքից։

— Հեռըցո՛ւս, պզտիկը քըզի կիտամ։

Պայման թագավորի հետ՝ օր կտրեց, տղեն էլավ գնաց Հազարի բիլբուլի տիրոջ քովը, ըսաց, թե ի՞նչպես է գացե Հազարի բիլբուլ բերե։

Հազարի բիլբուլի տերը ըսաց տղին.— Ինչպե՞ս ես գացե Հազարի բիլբուլ բերե։

—Գացի Սիվտակ դևի խողը, Սիվտակ դևին սպաներ եմ, ընդից ընցա Կարմիր դևի խողը, Կարմիր դևին եմ սպանե, Կարմիր

---

1 Բն. Բերողը՝ չիք (Ծ. Կ.)։

դևից հ՚ընցեր եմ Սև դևի խողը, Սև դևին եմ սպանե։ Ուրբաթ օրը Հազարի բիլբուլի խողն եմ ընցե։ Գացեր եմ Հազարի բիլբուլի քոշկ, աջ կողմը դռան օղն եմ կապե իմ ձին, բառսուն սանե ներ-դիվան եմ հ՚ելե, աջ կողմը դուռմ բաց եմ էնե, մե խորոտ ախչիկմ յորղան-դոշկի մեջ պառկած քնուկ էղե, պաքմ էն ախչկա էրեսից առեր եմ։ Ախչկա հադուստ շապիկ թալուկ էղե, շասլիկն առեր եմ, Հազարի բիլբուլ ճաղի վրիվուց իջուցեր եմ, առեր եմ, էկեր եմ։

— Ա՜, էդի ճիշտ ա, էդի օղորթ ա։ Ուր ասքրին բաց թորկեց. ամեկ ուրանց տուն զացին։

Առավ տղին թաղավորի տունն էկավ։ Հազարի բիլբուլի տերը հարցուց թաղավորին, ըսաց թե.— Քանի՞ տղա ես ունեցեր։

—Իրեք տղա եմ ունեցե։

— Իրեք տղեն էլ հա՞զր ին։

— Էրկուս հազրր են, մեկը չէ։

— Էրկուս կղանչե, թըխ գան էս տեխ։

Կղանչեց էրկու մեծ տղին, ուր մոտ բերեց։

Հազարի բիլբուլի տերը հարցրեց.— Ձեր ախպերը ի՞նչպես էնեցիք ճանապարհին։

Մեծ տղեն ըսաց թե.— Կռվի մեջ ընկանք, մեր ախպեր սպանվավ։

— Ուրիշ բա՞ն։

— Ուրիշ բան ի՞նչ կա, Հազարի բիլբուլ մենք բերինք, ախչիկներ մենք բերինք։

Ըսաց.— Էս ծեր ախպեր չէ՞, Հազարի բիլբուլ բերողն էդ չէ՞։

Թագավոր օր իմացավ օր իր տղեկները սուտ ըսեր ին, թագավոր վճռեց էդոնց էդ տեխիս սուրքուն (աքսոր) էնեց, իրենց կընանիքներով։

Պզտիկ տղենը յոթն օր, յոթ գիշեր հարսնիք էրավ, պզտիկ տըղենը պսակեց։

Երկնուց իջավ իրեք խատ խնձոր, մեկն ըսողին, մեկ անկաջ էնողին, մեկ լէ փայ էնողին։